ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Երկրորդական բաժինի 11-րդ դասարան

2015 – 2016 տարեշրջան

Հայոց պատմութեան դասանիւթերու բովանդակութեան պատկեր

Դասագիրք՝ «Հայոց Պատմութիւն»

Հեղինակ՝ Հրանդ Փաստրմաճեան

Ուսուցչուհի՝ Անի Պիլալեան

Բովանդակութիւն		Դասաւանդման նպատակակէտեր
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ Կացութիւնը Թրքահայաստանի մէջ		- Գիտնալ որ թուրք ղեկավարներու որդեգրած ուղեգիծը աւելի եւս ծանրացուց այն ողբալի կացութիւնը, ուր կը գտնուէին հայերը: - Թուել սարսափի վարչաձեւին հիմնական արարքները. . ապօրէն տուրքեր. . կողոպուտներ. . կալուածային իւրացումներ. . սպանութիւններ: - Բացատրել որ հայոց վիճակը անտանելի կը դառնար, որովհետեւ կառավարութիւնը հետզհետէ աւելի կը գրգռէր քիւրտերը հայոց դէմ: -Եզրակացութիւն՝ . 1878 էն 1894 բազմահազար հայերու արտագաղթ տեղի ունեցաւ դէպի Անդրկովկաս եւ Ամերիկա: . Սակայն հայ բնակչութեան խոշոր զանգուածը մնաց երկրին մէջ, կատաղօրէն կապուած մայրենի հողին:

1894-1896 ի Ջարդերը		- Հետեւանք· -Խորունկ դժգոհութեան հետեւանքը եղաւ այն, որ ծնունդ առին հայկական կուսակցութիւնները: - Թուել այդ կուսակցութիւնները. -Արմենական, Հնչակեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն: - Նպատակ· -Անհանդուրժելի այս կացութեան առջեւ հայկական կուսակցութիւնները փորձեցին համախմբել հայ ժողովուրդը եւ ձեռնարկեցին ինքնապաշտպանութեան առաջին արարքներուն: - Սասնոյ Ապստամբութիւն (1894-1896): - Գիտնալ որ 1878 էն ի վեր հայ ներկայացուցիչները, Պերլինի դաշնագրի 61–րդ յօդուածին համաձայն, չէին դադրած բարենորոգումներ պահանջելէ: - Սորվիլ հայկական պահանջներու շօշափած կէտերը: - 1894,1895 եւ 1896ի ջարդերու զոհերուն պատկերը՝ 150.000 զոհ:

Պանք Օթոմանի Գրաւումը		- Գիտնալ այս գործողութեան նպատակը. - Հ.Յ.Դ. կուսակցութիւնը, եւրոպացիները ստիպելու համար որ միջամտեն, որոշեց յանդուգն հարուածով մը գրաւել Պոլսոյ Պանք Օթոմանի շէնքը, որ միջազգային ելեւմուտքի գլխաւոր հաստատութիւնն էր Արեւելքի մէջ: - Անդրադառնալ որ այս աննախընթաց քաջագործութեան հակազդեցութիւնը կ՛ըլլայ այն, որ թուրքերը ջարդել կը սկսին Պոլսոյ հայ բնակչութիւնը: - Պանք Օթոմանի հարուածին հետեւանքներէն մէկն ալ իշխան Լոպանոֆի մահը կ՛ըլլայ: - Ամենէն կարեւոր հետեւանքը կ՛ըլլայ Ռուսիոյ զինուորական պատրաստութիւնները:
ՊԱՅՔԱՐ ԵՐԿՈՒ ՃԱԿԱՏԻ ՎՐԱՅ Հայ Յեղափոխական Շարժման Ծնունդը		- Ունենալ տեղեկութիւններ կուսակցութիւններու հիմնադրութեան մասին :
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ Երիտասարդ Թուրքերու Յեղափոխութիւնը Թրքացման Քաղաքականութիւնը Հայ Ժողովուրդը Համաշխարկային Առաջին Պատերազմի Նախօրեակին		- Անդրադառնալ որ Երիտասարդ Թուրքերու գործունէութիւնը շօշափելի դարձաւ « Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կոչուած մարմնի ստեղծումով: - « Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան նպատակը՝ . բռնի թրքացնել կայսրութեան ոչ-թուրք բոլոր ազգութիւնները: - Կատարել վիճակագրութիւն. - 1914 ին աշխարհի վրայ ապրող հայերուն թիւն էր մօտ 4.100.000 որոնցմէ 2.700.000 ը կ՛ապրէր պատմական Հայաստանի սահմաններուն մէջ:

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ Համաթրքութիւն եւ Համաթուրանականութիւն 1915-1918 ի Ցեղասպանութիւնը		- Սահմանել Համաթրքութիւն եւ Համաթուրանականութիւն եզրերը: - Յիշել եւ ընդարձակել հայոց ցեղասպանութեան մասին տրուած տեղեկութիւնները: - Փոխանցել հետեւեալ վիճակագրութիւնը. . Օսմանեան կայսրութեան 2.100.000 հայ բնակչութենէն 1.800.000 ը ինկաւ այս ծրագրի ցանցին մէջ եւ աւելի քան 1.000.000 ոչնչացաւ: - Քանի մը հարիւր հազար հայեր յաջողեցան փախուստ տալ Անդրկովկաս կամ վերապրիլ Սուրիոյ կամ Միջագետքի մէջ:
Հայերու Մասնակցութիւնը Առաջին Համաշխարհային Պատերազմին		- Կազմուեցան կամաւորական վեց գունդեր:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ Անդրկովկասի Պաշտպանութիւնը		- Անդրադառնալ որ Անդրկովկասեան խորհրդարան մը «Սէյմ» հաստատուեցաւ: - Թուրքիոյ նպատակն էր անդամահատել Ռուսահայաստանի մնացեալ մասը: - Հետեւանք՝ . հայերը շարունակեցին կենաց-մահու կռիւ մը, որմէ կախում ունէր իրենց ազգային գոյութիւնը: - Թուել ճակատամարտերու անուններ՝ . Ղարաքիլիսէի . Սարդարապատի . Բաշ Աբարանի

Հայաստանի Յարութիւնը Հայաստան Դաշնակիցներու Առջեւ		- Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը հռչակուեցաւ 1918 Մայիս 28 ին: - Նշել որ 1918ի Յունիսի սկիզբը, առաջին կառավարութիւնը, որ մարմին առած ըլլայ Հայաստանի բարձրաւանդակին վրայ Բագրատունեաց անկումէն ասդին, ժողով մը կը գումարէր Երեւանի մէջ: - Ընդգծել որ Հայաստան այսպէսով, յանդուգն ձեռքով մը կը վերամիացնէր իր պատմութեան կտրուած թելը: - Գիտնալ որ Գրիգոր Լուսաւորիչի հարենիքն էր, որ յարութիւն կ'առնէր 1918 տարուան ընթացքին: - Անդրադառնալ որ հակառակ երկիրը խեղդող սոսկալի դժուարութիւններուն, կառավարութիւնը գործի անցաւ՝ մեծ հայրենասէր Արամ Մանուկեանի տուած մղումով: . հայկական կառավարութիւնը 1918էն 1920 յաջորդաբար գլխաւորուած Քաջազնունիի, Խատիսեանի եւ Օհանջանեանի կողմէ, հաստատեց կարգն ու ապահովութիւնը: - Գիտնալ որ 1920 Յունուար ամսու վերջն է միայն, որ Դաշնակիցները տէ Ֆաքթօ ճանչցան Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը: - Գիտնալ որ 1920 Օգոստոս 10ին Թուրքիոյ եւ Դաշնակիցներու միջեւ հաշտութեան դաշնագրի ստորագրման արարողութիւնը տեղի կ'ունենար Սեւրի մէջ: Ա. Ահարոնեան Հայաստանի անունով ստորագրեց դաշնագիրը, որ ոչ միայն տէ Ֆաքթօ, այլեւ տէ Ժիւրէ ճանչցաւ Հայաստանը:

1920ի Հայ Եւ Թուրք Պատերազմը		- Նշել որ 1920 Նոյեմբեր 22ին, Միացեալ Նահանգներու նախագահ՝ Վուտրօ Ուիլսըն կու տար իրաւարարի իր վճիռը, որ հայկական պետութեան կը յանձնէր Վանի, Էրզրումի եւ Պիթլիսի վիլայէթներուն մեծ մասը եւ Տրապիզոնի վիլայէթին ալ մէկ մասը: - Գիտնալ որ Լոզանի մէջ 1922ի Նոյեմբերին խորհրդաժողով մը գումարուեցաւ, վերաքննելու համար Սեւրի դաշնագիրը, կացութիւնը խորապէս փոխուած էր ի նպաստ Թուրքիոյ: - Պետք է նշել որ 1920ի սկիզբը սերտ կապեր ստեղուած էին Անգարայի կառավարութեան եւ խորհրդային Ռուսիոյ միջեւ: - 1920 Դեկտեմբեր 2ին, Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչները Ալեքսանտրապոլի մէջ կը ստիպուէին ընդունիլ Անգարայի կառավարութեան կողմէ պարտադրուած հաշտութեան ծանր պայմանները: Թուրքիա կը պահէր ոչ միայն Թրքահայաստանի ամբողջութիւնը, այլ կը վերագրաւէր Կարսի եւ Արտահանի շրջանները: - Նոյն օրը, այսինքն 1920 Դեկտեմբեր 2-ին, Հայաստանի Հանրապետութիւնը կը դառնար Հայաստանի Խորհրդային Հանրապետութիւն: